# ՄԻ՛ ԼԱՐ…

Մի՛ լար իմ ընկեր, որ վաղուց արդէն
Մտաւ արեւը իր հանգստարան.
Մի՛ լար, որ տիրեց աշխարհ համօրէն
Մռայլ գիշերը, մթով անվախճան։

Մի՛ յուսահատուիր, յոյսդ պահպանիր.
Թող օրը տիրէ քո վսեմ սրտում…
Ընկեր ջա՛ն, ընկե՛ր, տոկա՛ համբերիր,
Գիշերով գնա, ուղիղ, անդադրում…

Տե՛ս շատ վաղուց է ծագել երկնի վրայ
Աստղը յուսաբեր—լոյս օրուայ նշան…
Ա՜հ, մի՛ վհատիր, յուսով դու վստահ
Հանդարտ երգելով, քո ճամբան կտրիր…

Մի՛ լար, իմ ընկեր, յոյսը թող եռայ
Խաւար գիշերում… թողի՜ր դէպ իդեալ—
Դէպ, վսեմ աստղը. այն փայլը նորա
Տե՛ս մեղմացնում մութը վշտահար…

Մի՛ յուսահատուիր. յոյսդ փայփայիր
Քո վսեմ սրտում. կանգնի՜ր սեւ գիշեր.
Թողի՜ր դէպ աստղը… դու ճամբայ կտրիր…
Անշո՛ւշտ կը տեսնես դու յետոյ օրեր…

Ց. ԽԱՆԼԱՐԵԱՆ